ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՔԵՆՅԱՑ ՎԱՆՔԸ ԸՍՏ Ղ. ԱԼԻՇԱՆԻ

Ղեւոնդ Ալիշանի պատմաաշխարհագրական կոթողային աշխատությունների («Ծիրակ», «Սիսուան», «Այրարատ», «Սիսական») շատուշատ փվյալներ իրենց արդիականությունը չեն կորցրել մինչեւ մեր օրերը: Դրանք, կարելի է ասել, սկզբնաղբյուրի արժեք ունեն շատ ուսումնասիրողների համար: Խոսքը վստահաբար վերաբերում է նաեւ Հայ Եկեղեցուն եւ վանքերին, անապատներին, դրանց թվում նաեւ՝Գեղարքունյաց հանրահռչակ **Մաքենիսի վանքին**, որին նվիրված են «Սիսականի» 65-70-րդ էջերը: Վանքը գտնվում է ՀՀ ներկայիս Գեղարքունիքի մարզում, Վարդենիս քաղաքից մոտ 15 կմ հարավ-արեւելք, Մաքենիս գյուղի մոտ, համանուն գետի աջ ափին, մի ոչ բարձր լեռանաճյուղի վրա: Միջնադարում հռչակավոր է եղել վանքը, այնքան, որ Մովսես Կաղանկատվացին բնորոշում է անգամ՝ «մեծ մայրաքաղաքն Մաքենացւոց»: Ղ. Ալիշանը բազմաթիվ աղբյուրներից քաղած պատմական փաստեր է մատուցում այս վանքի հիմնադրման, առաջնորդների, անապատական կյանքի մասին: Դրանք մեկ անգամ եւս շրջանառության մեջ դնելով, կարծում ենք, հնարավոր կլինի նախ ի ցույց դնել միջնադարում Մաքենավանքի ունեցած շուքն ու անապատական շունչը, ապա նաեւ՝Ղ. Ալիշանի գործվանքը հայկական սրբավայրերի հանդեպ:

Պետք է ասել, որ Ղ. Ալիշանը մեծ ու ընդգրկուն մի ծրագիր իրականացնելու փափագ ուներ՝ցանկանում էր կազմել պատմական Մեծ եւ Փոքր Հայքերի եւ Կիլիկիայի **բոլոր նահանգների** մանրամասն պատմաաշխարհագրական նկարագրությունը: Այդ մասին խոսում է «Սիսականի» առաջաբանում (այդ հատվածը ներկայացնում ենք գրաբարից մեր կատարած թարգմանությամբ).

«...Ցանկանում եմ հայտնել Մեծ եւ Փոքր Հայքերի քսան աշխարհները մանրամասն նկարագրելու փափագիս մասին: Ավելի վաղ՝երեսուն եւ ավելի տարիներ առաջ որոշ չափով կազմել էի [այդ ծրագրի] երեք մասերը, այն ժամանակվա գիտության եւ հնարավորությանս համապատասխան:

Հետագայում շարունակ աճեցին տեղագրական, պատկերագրական, հնագիտական եւ աշխարհագիտական այլ տեղեկություններ: Ուստի պարզ է, որ նոր գրքերի («Սիսուան», «Այրարատ», «Սիսական») համար նախկին գրառումներս համառոտ էին եւ սեղմ, բոլորը միասին կարող էին կազմել նշված հատորների մոտ մեկ եւ կեսը, եւ տեղին կլիներ ամեն աշխարհն ըստ արժանվույն ընդարձակել եւ երեքի ծավալին համապատասխանեցնել, որոշները թերեւս բովանդակել ու ամփոփել նաեւ մեկ, կամ երկու, կամ երեքական հատորներում: Մանավանդ որ՝Հայոց ոչ բոլոր աշխարհներն են լիարժեք հիշատակված պատմության մեջ, ինչպես՝Գուգարքը, Տուրուբերանը եւ Վասպուրականը: Ու կան նաեւ փոքր եւ սակավածանոթ կամ ոչ հայաբնակ [աշխարհներ], ինչպիսիք են Փայտակարանը եւ Պարսկահայքը,

մասամբ նաեւ Արցախը եւ Ուտիքը, հարավային Հայքի մեծ մասը՝ Աղձնիքը, Կորճայքը եւ Մոկքը»[1]:

Կարծում ենք անտեղի չի լինի մեկ-երկու նկատառում ներկայացնել Ղեւոնդ Ալիշանի աշխատությունների լեզվի մասին:

Ալիշանն իր պատմաաշխարհագրական երկերը գրել է գրաբարով: Մխիթարյան մյուս անվանի գիտնական-հեղինակների նման, եւ գուցե նրանցից առավել, Ալիշանը գրաբարը գործածում է ստեղծագործաբար: Ինչ է դա նշանակում: Հայերենի դասական շրջանի, ինչպես նաեւ հետագայի ստեղծագործություններն ու հեղինակներն իրենց՝ հաճախ սրբագործած գրաբարով չեն կաշկանդում ԺԹ.դարի հեղինակին: Ծավալով, խորությամբ, ժանրերի բազմազանությամբ միջնադարի հսկայական լեզվական ժառանգությունն ամբողջովին սեփականելով՝ Ալիշանը միաժամանակ մշակել է իր ստեղծագործական լեզվական ոճը, գործածել է իր ստեղծած նորակազմ բառերն ու ոճերը՝ նոր հուն բացելով հայերենի հոմանիշային հարստության համար (օրինակ՝ փայլակնաձեւ, պնդասրտություն, որ հոմանիշ է համառություն բառին, հրոսել՝ ասպատակել, ծավալասփյուռ ծովակ, վայրենագեղ բուսաբերություն, կարկաչասահ վտակ, քաջուսումն Մովսես եւ այլ, եւ այլն), որոշ բառերի նոր նրբիմաստներ է հաղորդում, նաեւ՝ ըստ անհրաժեշտության հմտորեն գործածում է շարահյուսական ոչ տարածված, հաճախ՝ բարդ կառույցներ:

Ալիշանը օգտվել է գրաբարի բազմահարուստ ժառանգությունից, միաժամանակ գնացել է նոր գեղեցիկ արտահայտություններ, պատկերներ, բառեր կերտելու իր ճանապարհով: Դա հստակ կարելի է ցույց տալ թեկուզ մի քանի պատկերներով, ինչպես օրինակ Սեւանի նկարագրությունը՝ «Հրաշատեսիկ կապուտակային ծաւալմամբ գեղածիծաղ ծովուն Գեղամայ»: Գեղարվեստական պատկեր է Արաքսի նկարագիրը. «Վակժոյժ ապառաժահոս՝ այլ եւ քերդողաշարժ՝ քարավէժ վազիւք Երասխայ, յոր իբրեւ յլղձալի ծոց մայրական՝ խուռն խայտալով եւ կայտռելով խաղան թափին գետակք եւ վտակք բազմահեղձ ձորոց եւ գաւառաց» (էջ Է): Վասակ Սյունու կերպարն ամբողջացնում է հետեւյալ խորագնա արտահայտությամբ՝ «արդարեւ սրտառուչ եւ կսկծագին իմն նկարագրեալ գիտաւարային **ստորանկումն** փայլակնաձեւ **բարձրացելոյն**» (էջ 12):

Ահա մեկ-երկու նկարագրություն՝ աշխարհաբար մեր փոխանցմամբ.

«Այստեղ (Սեւանում) ժայռերի խոժոռությունն ու ձմեռային եղանակի խստությունն անգամ, երկնագույն ալիքներից զվարճանալով, ծաղկաբեր առույգ գարնան են փոխակերպվում» (էջ 25):

Կամ Հայրավանքի նկարագրությունը՝ «վանքը այսպես շատ դարեր կանգուն է մնացել այստեղ՝ իր շուրջը սփռված ավերակ դաստակերտի եւ այնտեղ՝ ծովակի անդադար ծփանքի միջեւ, եւ թվում է դարձել է ժամանակների եւ իրադարձությունների վկա եւ գուշակ» (էջ 40):

Թեեւ «Սիսականում» որեւէ խոսք չկա, թե ինչու է ԺԹ. դարավերջին գրած եւ հրատարակած իր աշխատությունը Ալիշանը շարադրում ոչ թե համընդհանուր ընդունելություն եւ գրական նորմավորում ստացած աշխարհաբարով, այլ հնավանդ գրաբարով, սակայն շարադրանքի տողերի, նախադասությունների, մտքերի միջից կարծում ենք կարելի է կռահել հեղինակի գորովանքը գրաբարի հանդեպ: Գրաբարն Ալիշանի համար չի ծառայել որպես

1 **Ղեւոնդ Ալիշան,** Սիսական, Վենետիկ, 1893, Յառաջաբան, էջ Ա:

սոսկ գիտական լեզու՝ գիտական աշխատություն գրելու համար: Մեր հին լեզվի խորը իմացությամբ, ոճական հմտությամբ Ալիշանը (սա մեզ համար ամենակարևորն է) գրաբարը ծառայեցրել է, եթե թույլատրելի է այդ բառը գործածել, **ընթերցողին հայոց հաղթական դրվագներով վարակելուն, հայրենի եզերքի բնական ու մարդածին հարստությունները սիրել տալուն, ի վերջո՝ հայրենասիրություն ներարկելուն**: Մեծագույն հայրենասեր է Ղեւոնդ Ալիշանը:

Հենց այդպիսի մի դրվագ է Մաքենավանքի նկարագրությունը, որն աշխարհաբար փոխանցումով եւ աննշան գեղջումներով ներկայացնում ենք ստորեւ:

«ՄԱՔԵՆՅԱՑ ՁՈՐԱՀՈՎԻՏԸ, տեղադրված լինելով Սոդքի եւ Վանեվանի միջեւ, նեղ է ու փոքրասահման: Այդպես է կոչվում գերահոչակ վանքի անունով, որն այլազգիները կոչում են Կարմիր վանք՝ համանուն գեղակի նման: Գեղակը ... կտրելով լեռների ստորին պատվարը՝ հյուսիսից իջնում եւ հոսում է Գեղամա ծովը՝ բաժանվելով երկու գեղաբերանի: Վերին մասում գեղը երեք ճյուղավորում ունի, որոնք միավորվում են Մաքենոցի մոտ. այստեղից սկսած այն կոչվում է Յարփուզլու՝ ծովի մոտ գտնվող գլխավոր գյուղի անունով: Ձորակներից կամ գեղի ակունքներից վեր կան Վանեվանի լճակներից փոքր երկու լճակներ, նաեւ ուրիշ փոքր լճակներ, որոնց թիվն ամբողջ Փորակում 10-ից ավելի է:

Մաքենյաց ձորահովիտում հազիվ չորս կամ հինգ շեն բնակատեղիներ են նշվում, որոնց բնակիչների մեծագույն մասը թաթարներ են: Իսկ ծովակի արեւելյան սահմանածայրի ափին գտնվող առաջին գյուղը՝ Ջաղալու, հայաբնակ է եւ ունի 60 կամ 70 տուն: Այս գյուղի մերձակայքում քարափին 1882 թվականին գտնվել է ինը տողանոց բեւեռագիր արձանագրությունը: Իսկ բարձրադիր հին գերեզմանատեղիում նշանավոր է երիվարի բնական մեծության քարարձանը:

Աջից՝ գեղի արեւելքից Յարփուզլու գյուղն է, 40 տուն թաթարներով, որ կես փարսախ հեռու է ծովեզերքից:

Մեծահամբավ **Մաքենոց մենաստանն** իր հռչակով ամենահինն է ամբողջ Գեղամա երկրում: Այժմ կիսականգուն-կիսավեր է օտարաբնակ Ջամուրլու եւ Գզըլվանք բնակավայրերի հարավ-արեւելքում: (Գզըլվանքն իր անունն ստացել է շինությունների կարմրագույն քարից): Հնում գյուղն ու վանքը միեւնույն անունով կոչվում էին **Մաքենոց, Մաքենյաց** կամ **Մաքենոցաց**, նաեւ՝ **Մաքեստենից**. ո՞վ է տվել կամ ումի՞ց է այս անունը ստացել՝ հայտնի չէ: Վանքերն ու մենաստանները սովորաբար բնակավայրերից են իրենց անունն ընդունում, իսկ այս վայրի համար ասվում է, որ մենաստանն այդպես է կոչվել կրոնավորների զգեստների մաքենի կամ օդենի (ոչխարի մորթին է) նյութից, որից եւ առաջացել է գյուղի անունը:

Հնագույն կրոնական կենտրոններից մեկն է Մաքենոց մենաստանը, այն վստահաբար հիմնադրվել է 8-րդ դարից էլ առաջ, եւ գուցե հասակակից է Այրարատի միաբանական հին վանքերին: Մաքենիսը հատկապես հիշվել եւ մեծարվել է Մասիսի փեշերին՝ Ակռռիի վանքում ապրած եւ իշխանների փոխարեն ապաշխարած այն ծերունի Սողոմոնի շնորհիվ, որը գերադասեց գնալ բնակվել ոչ թե անապատներում, այլ «Երաշխավոր կամ Մաքենոց» միաբանների վանքում: Այս Սողոմոնը 8-րդ դարի սկզբում եւ ողջ այդ դարի ընթացքում հռչակ ունեցավ երկու (թերեւս՝ նաեւ երեք) այլ Սողոմոնների հետ մեկտեղ: Նրանցից ավելի ավագը

Ը. դարի առաջին կեսին վանքերի շինության եւ բարեկարգության, իմաստության եւ սրբակրոն վարքի շնորհիվ, նաեւ՝ մյուսներից լիովին առանձնանալու համար կոչվեց Հարանց հայր: Կրոնական եւ ուսումնական ոլորտներում այս Սողոմոնի կատարած կարեւոր գործերի շարքում մեզ համար ամենապանծալին «Տոնական»[2] մատյանն է՝ Հայաստանյայց եկեղեցու ամենանշանավոր գրքերից մեկը:

[Մխիթար] Այրիվանեցի ժամանակագիրը կարծում է, որ այս մատյանը 701-711 թթ. միջոցին է հրապարակ հանվել եւ գրում է. «Տոնականը կազմել է Հայր Սողոմոնը Մաքենիսում»: Հնարավոր է՝ միայն առաջին մասն է Հայր Սողոմոնը կազմել, քանի որ գրքի ամբողջականացման համար նույն գրքի բուն առաջաբանում վկայված է ՃՂԶ թիվը, որ Փրկչական 747 թվականն է անում: Իսկ հեղինակի մասին Այրիվանեցին պատմում է խրթնաբան ու բարձր այսպիսի ոճով. «Իմաստուն մի այր [էր], որի անունը Սողոմովն էր, ոչ շատ տարիներ առաջ արեւելյան աշխարհից եկել էր Գեղարքունյաց Դաշնավոր անվանված ծովը՝ ուխտական Մաքեստենից վանական վանքը: Սրբազան այրերի առաջնորդն էր... Հաստատել է տոների, ժողովների կանոնը, նաեւ՝ վսեմական հոգեպատում ճառերի պատմության կազմողն է եւ ժողովողը զիվորական արդար գովության... Աստծու ծովածավալ խոսքով ու գերապանծ հորդահոս գիտությամբ ողողեց այս վայրերը: Սա այն տիեզերական ծովն է, որի մասին Մովսես մարգարեն ասաց, թե՝ Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրայով: Եւ այդպես հովանավոր Աստծու Հոգին շրջում էր այս ծովերի վրայով՝ ծնունդ տալով նրա վայելչատեսակ ձկների: Սա Աստվածային ցողով պարուրված այն լեռն է, որով եւ որի լույսից զվարճանում են հոտերն ու հովիվները: Սա հովիվների գեղեցիկ լեռների այն անդաստանն է, որ հաճելի է շատերի լսելիքին ու քիմքին... Սա Ավետարանների Աստծու առակավոր խոսքն է, որ պարունակում է հին ու նոր գանձեր: Այդպես է, քանի որ գիրքը շարադրեց կանոնավոր մասերով, հին վկայություններով ու զանազան նոր պատմություններով...» եւ այլն: Իսկ «Տոնական» գրքի բովանդակության մասին համառոտ ասում է. «Պարունակում է տարվա սկզբից մինչեւ ավարտը՝ գիշերային ժամերգության, նաեւ տերունական տոների, սուրբ մարգարեների ու առաքյալների եւ մարտիրոսների, հայրապետների եւ թագավորների տոների ընթերցվածքները»:

Այսպիսի խոհեմ եւ հոգելից մարդու աշակերտները նրա նման արժանավոր դարձան: Նրանց մեջ ամենագերազանցը Ը. դարի առաջին տարիներին Սյունիքի իմաստասեր Ստեփանոս դիտապետն էր, որը, համաձայն իր անվանակից պատմիչ Ստեփանոս Օրբելյանի գրածի՝ Դվինի Հայոց կաթողիկոսական տանը ուսմամբ առաջադիմելուց հետո «...հրաժարվեց բազմամբոխ քաղաքից եւ գնաց համբավատենչ եւ մեծասքանչ հանդիսարանը՝ սուրբ եւ աստվածարնակ հրեշտակերամ Մաքենոցաց առաքինարանը, աստվածակենցաղ եւ սերովբեատիպ Սողոմոն Հարանց հոր մոտ, որ մեծ ուխտի Էգոնոմոսն էր եւ այն ժամանակ պայծառանում էր մեծամեծ ճգնությամբ եւ անասելի խստամբեր վարքով... Եւ այնտեղ իրեն նվիրեց սասպիկ տքնության եւ մշտական առաքինությունների անտանելի վարքի»:

Դրանից մի քանի տարի անց Սողոմոնի մոտ է գալիս զարմանահրաշ նշան ունցող մեկ այլ մարդ՝ մեծ նահատակ եւ Գողթան իշխան Վահանը, որ մտադրվել էր գնալ արքունի պա-

2 Ճառընտիր ժողովածուն է, որն առաջինը կազմել է Ը. դարի մատենագիր, մանկավարժ, Մաքենյաց վանքի առաջնորդ Սողոմոն Մաքենացին:

լատը ամիրապետի մոտ եւ հրապարակավ խոստովանել իր քրիստոնյա հավատքը... Եւ հասնելով Մաքենոցաց վանքը՝ այս ամենը ճշմարտապես տեղեկացրեց հոգեւոր հորը: Եւ նրանից ընդունեց հորդորական խրատներ եւ քաջալերանք ի Քրիստոս: Առաջնորդի անունն էր Սաղոմոն, որ Տիրոջ մարմնի եւ արյան հաղորդությունը տվեց Սուրբ Խաչի տոնին... այստեղ նաեւ մի սքանչելի տեսիլ երեւաց Վահանին. աննկարագրելի լույս ցոլաց եւ ձայն լսվեց, որն ասում էր՝ «Քաջալերվի՛ր, Վահա՛ն...»: Եւ ամենքը Աստծուն փառավորելով՝ ուղեկցեցին նրան մեծ սիրով եւ արտասուքով: Այս բարի դիպվածից մի փոքր անց Մաքենոցաց վանքին, ինչպես նաեւ Գեղամի եւ Սյունիքի այլ կողմերին մի չարիք պատահեց, որը խառնիխուռն կերպով նկարագրում է Ստեփանոս Օրբելյանը, եւ որը ուրիշ առիթով հիշել ենք՝ Մրվանի եւ Բաբանի հետ կապված երկու դեպքերը մի պատմության մեջ ձուլելով:

Առաջին՝ Մրվանը, անվանի ոստիկանն էր, հետագայում՝ ամիրապետ, որ 734 թվականին ուղարկվեց Հայաստան եւ Հոների երկիրը: Ըստ Ստ.Օրբելյանի՝ 727 թվականին աշխարհավեր այս Մրվանը բազմաքանակ զորքով արշավեց Հայաստան եւ «սաստիկ հուրի նման այրեց ու հրդեհեց մեր գեղեցիկ երկիրը»: Սրա դեմ, ասում է Օրբելյանը, Վասակ Սյունի նահապետը բերեց պարսիկ Բաբանին: Նա իրականում հետո՝ 821 թվականին է եկել, իսկ հիմա հայտնի չէ, թե ո՛ւմ ձեռքով պատուհասը եղավ: Բայց ստույգ է վանքերի ավերման մասին պատմածը. «Բայց կրոնավորները նախապես իմանալով վտանգի մասին երկու մասի բաժանվեցին, որոնց մի մասը Սողոմոն վանահոր հետ գնաց... Շիրակ գավառը, Ջրեսկ սուրբ վանքը... Իսկ մյուս մասը գնաց Աղվանք, Միհրներսեհի, այսինքն Ջրվշտիկ վանքը»:

Այստեղ դարձյալ սխալվում է Ստեփանոս Օրբելյանը Վանահայր Սողոմոնի հարցում (նրան Սաղոմ է կոչում), երբ ասում է, թե նա ոչ թե առաջինն էր՝ «որ Հարանց հայր կոչվեց, այլ նրա աշակերտը»: Ընդհակառակը, երիցագույն պատմիչ Հովհաննես Կաթողիկոսը, առանց պատճառները հիշելու, Սողոմոն կաթողիկոսի մասին ճառախոսելիս ասում է, որ նա «Մաքենացիների միաբանությունում իրեն նվիրել էր բազում առաքինաջան գործերի, վարժ էր փիլիսոփայական արվեստի եւ առավել եւս հմուտ՝ սաղմոսերգության մեջ: Եւ քանի որ Հայրերի հայ Սողոմոնի ժամանակ Մաքենացիների միաբանությունը բաժանվել էր երկու մասի, եւ Հայրերի հայրը կրոնական կես մասի հետ գնալով բնակվել էր Շիրակ գավառի Ջրեսկ գյուղում, նրա հետեւից շարժվում գնում է նաեւ այս Սողոմոնը»:

Սողոմոնի վերադարձը իր սիրելի Մաքենավանք չի հիշատակվում: Բայց ըստ հին հիշատակագրության՝ 747թ. նա այստեղ գրել եւ ավարտել է «Տոնականը», ուրեմն հետագայում Շիրակից վերադարձել եւ իր վանքում էլ մահացել է: Ցավոք գրքերից մեզ հայտնի չի դառնում Սողոմոնի գերեզմանի տեղը, որին կենդանության ժամանակ ամենքը օգնության էին դիմում գիտականության եւ սրբության համար: Այդպես օրինակ՝ Աղվանքի կաթողիկոսը 8-րդ դարի առաջին քառորդին նրան է կանչել, որպեսզի հորդորներով եւ նզովքով խրատի իր երկրի իշխաններին եւ նրանց հետ պահի խոտորընթաց վարքից եւ ազգախառն ամուսնություններից: Իսկ աշակերտ Սողոմոնը, որը հետո կաթողիկոս դարձավ, «հարցրեց իր վարդապետին՝ Մաքենացիների Հայր Սողոմոնին, եւ նա գրով սովորեցրեց» հայերի դեմ հույների հակառակության պատճառը: Սովորեցրեց նաեւ քահանայական ինը դասեր չունենալու, Աբրահամի Կաթողիկոս ընտրվելու ժամանակ նրան Հայոց պատրիարք կոչելու,

Աղվանքի կաթողիկոսին արքեպիսկոպոս, իսկ Սյունյաց եպիսկոպոսին՝ մետրոպոլիտ կոչելու մասին: Սակայն թող բավական լինի Մաքենացիների պարծանք՝ բազմարդյունք եւ բազմաշնորհ «Հայրերի հոր» մասին այսքանն հիշատակելը:

Առաջինի նման երկրորդ Սողոմոնը նույնպես, մինչեւ խորը ծերության հասնելով, տակավին ճգնում էր Ջրեսկում, երբ հրավիրվեց եւ դարձավ Հայոց տան Կաթողիկոս[3]: Նրա մասին ասվում է, որ տկարացած անձը իր նախորդ մեծ կաթողիկոսների նման նվիրաբերեց եկեղեցուն, սոսկ մեկ տարվա կարճ հայրապետության ժամանակ անմոռաց երախտիքով հոգ տարավ մանկության վարժարանի նորոգության համար: Ժամանակագիրներից մեկը այդ նորոգությունը նշում է ազգային նշանավոր այլ դեպքերի հետ. «ՄԼԷ. թվին Տեր Սողոմոնը վերաշինեց Մաքենիսը», որ ճիշտ 788 թվականն է անում:

Այս նորոգությունից դեռ քառասուն տարի չէր անցել, երբ մի նոր ավերածություն վրա հասավ, այս անգամ աղանդաշատ բռնակալ Բաբան պարսիկի ձեռքով: Սա չբավարարվելով Գեղաքունիքի կոտորածներով՝ «այրեց նաեւ մայրաքաղաք Մաքենոցաց մեծ վանքը. եւ Հայոց ՄՀԶ (829 թ.) թվականն էր»: Եւ երբ շատ չանցած Բաբանն ընկավ քաջ Սահլի ձեռքով, այս տեղերն էլ շատերի նման սկսեցին բարեկարգվել, մանավանդ որ դրանից հետո մեկ դար խաղաղությամբ տիրեցին Սիսական Հայկազուն պայազատները՝ Գեղամա իշխանները: Այս միջոցին Տաթեւի եպիսկոպոսական կալվածքի 844 թվականի նվիրատվության պայմանագրի նախաձեռնողների հետ հիշատակվում է Ստեփանոս Մաքենոցաց վանականը: Սրան է աշակերտել Գեղամա երկրի մեկ այլ պարծանք եւ Սեւանի վանքի հիմնադիր մեծանուն Մաշտոցը: Նրա հայրը՝ Ս.Թեոդորոս եկեղեցու ժառանգավորներից Գրիգոր Երեց Եղիվարդեցին բռնությունից խույս տալով տաճիկների կողմերից եկել էր Սողք գավառը, ուր եւ «ծնվեց Քրիստոսի գեղեցիկ աղավնին՝ Մաշտոցը»:

Վերջինիս կենդանության ժամանակ իր իսկ աշակերտ Սողոմոնը գրում է, որ Մաշտոցի հայրը որդուն տվեց «կրոնավոր մեկին, որի անունը Թեոդորոս էր... Սովորեց Գեղամա գավառի Մաքենոց կոչվող վանքում եւ ընդունեց քահանայության աստիճան Սյունյաց Դավիթ եպիսկոպոսից», ապա անցավ միայնության անապատները եւ կանգ առավ Սեւանում, ուր եւ ճանաչում ենք նրան մոտիկից: Մաշտոցի ժամանակ՝ 854 թ. էր, որ Հովհաննես Ե. Օվայեցի Կաթողիկոսը «մինչ շրջում էր Գեղաքունիքի գավառների վիճակներով, Մաքենոցաց կրոնական կայանի մեծ վանքում հասավ նրա կյանքի վախճանը, եւ նույն սուրբ վանքում էլ նրան հողին հանձնեցին»:

Ինչպիսի՞ն էր Մաքենավանքի այն ժամանակվա կամ ավելի առաջվա շինվածքը (այն երկու անգամ ավերվել եւ հրդեհվել է), մեզ հայտնի չէ: Թերեւս նախկին մենաստանը շինված էր հեռու՝ գյուղի հյուսիսային կողմում, որտեղ նշմարվում է ավերակ Գզըլվանքը: Իսկ հետագայի եւ ներկայիս հազարամյա շինության փլատակները անշքացած Մաքենոցաց գյուղի հարավում են, որը նույնպես Գզըլվանք է կոչվում: Այն գտնվում է բլրի լանջին՝ վայելչադեպ մի վայրում, գետի եզրին, Յարփուզլու գյուղից մոտ երկու, իսկ ծովից՝ երեք մղոն հարավ: Տարածքը պատված է պարիսպով, որը միաբանների կացարանների ու վանատեղիի նման մասամբ քանդված է: Մեջտեղում կանգուն մնացած Տիրամոր եկեղեցին է՝ վերջին դարերում հռչակված Գեղամա Ասպվածածինը, որ ամբողջ գավառի կամ վիճակի հոգեւոր տեսուչի

3 **Սողոմոն Ա. Գաբենեցի,** Ամենայն Հայոց Կաթողիկոս 791-792 թթ.:

նստավայրն է եղել: Միջին մեծություն ունի (ըստ Ս.Ջալալյանի՝ 28 կանգուն երկարություն եւ 24՝ լայնություն), խաչաձեւ կիսաշրջան է, ներսից փրոհված է ութ խորշերի, որի համար Ջալալյանն ասում է, թե ինը խորան կամ սեղանատեղի ունի, իսկ ըստ Շահխաթունյանի՝ ունի միայն մեկ սեղան եւ մեկ դուռ՝ հարավի կողմից:

Այս դռան ներսի երեսին վարպետորեն քանդակված է սլացքի մեջ գտնվող մի երիվար: Պատկերը զովասանքով են հիշում այս կողմերի մերազգի նոր ուսումնասիրողները: Գեղեցիկ է կամարների վրա առանց սյուների բարձրացված գմբեթը, բայց քարերը լավ սրբատաշ չեն, եթե միայն չեն մաշվել ժամանակի ընթացքում: Եկեղեցու պատերը խախտված ու ճեղքված են, եւ եթե արագ նորոգություն չկատարվի, կհայտնվեն կործանման վտանգի եզրին: Սյունիքի պատմիչը հավաստում է, որ վանքն այսպիսի վիճակի մեջ էր նաեւ մեզանից գրեթե վեց դար առաջ եւ կառուցումից՝ Թ. դարի վերջերից չորս դար հետո: Պատմիչը եկեղեցու կառուցումը հիշելիս ընդօրինակել է նրա արձանագրությունը, որի կես մասն էր այն ժամանակ երեւում, իսկ այժմ իսպառ վերացել է:

Գրիգոր Բ. Սուփանը Կոթի եկեղեցու կառուցումից հետո հրաշակերտ մենաստանում՝ Մաքենոցաց փառաբանակ վանքում շինում է նաեւ երկնասլաց հավաքատեղին՝ Սուրբ Աստվածածնի անունով գմբեթահարկ եկեղեցին, այն պարսպում է վեմերով եւ, ուրիշ շատ կառուցումներ անելով, առատաբար զարդարում է զարդերով, հարստացնում շատ ունեցվածքով, գյուղերով, ագարակներով, ինչպես եւ այգիներով՝ Գառնիում, Երեւանում եւ այլ տեղերում: Այնտեղ իր հուսառատ գործերի հիշատակին արձանագրություն է կատարում, որի պատճենը հետեւյալն է (այս արձանագրությունը շատ բանով է նմանվում Կոթի արձանագրությանը)[4].

«Կամաւն Աստուծոյ եւ՝ Սուփան Սիւնեաց իշխան շինեցի, զՄաքենոցաց եկեղեցիս եւ անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք եւ աստուածային կրակարանաւք. եւ եղու զանփական գեղն մեր ի սա որ ըստ անուան եկեղեցւոյս Աստուածածնի ասի, իւր ամենայն սահմանաւք, լեռամբ եւ դաշտիս, եւ եղու որս ձկանց զԲողաշէն՝ սեղանոյն, եւ Զ. դրամ ի Դեղձանագետոյ դապալէն, Մ. դրամ ի Կոթկայ, ՅԾ. յԱմեռէն, որ լինի ՌՄԾ. դրամ. եղու եւ հինգ կուղպակնի յԱնի, եւ Է. այգի յԵրեւան, եւ Ե. առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի, եւ Բ. այգի յԵղեգիս, եւ զամենայն պէտս սուրբ եղբայրութեանս լցի առատապէս եւ փարթամացուցի ներքոյ եւ արտաքոյ. եղու եւ ջոլիրս եզանց եւ ջոկս գուարակաց եւ անդեայս եւ հաւտս ոչխարաց: Եւ արդ մաղթեմք զամենայն աստուածացելոյ սուրբ ուխտիդ պաշտօնեայսդ, որում Աստուած է միջնորդ, կատարել վասն մեղուցեալ հոգւոյս գերկու քառասունսն տէրունի պատարագ ինձ. եւ անխափան երգել զերեկոորին սաղմոսն զոր կարգեալ եմ յամենայն եկեղեցիք: Եւ Տէր Յովհաննէս Հայոց Կաթողիկոսն, ի տանէս մի՛ իշխեսցէ դատ կամ փայքար հանել, եւ մի՛ յիմ որդեաց կամ ի ժառանգաւորաց. այլ որ ընծայիս հակառակէ կամ հանել ջանայ եւ որ հակառակ անուանեսցի՝ նգովս չարաչար ընկալցի յԱստուծոյ եւ յամենայն աթոռակալ Սրբոյն Գրիգորի, եւ մասն ընդ Յուդայի մատնչին եղիցի: Եւ դարձեալ խաւսիմ ընդ ձեզ, առաջնորդք եւ կրաւնաւորք վանացս, հաստատուն կալ մինչ ի գալուստն Քրիստոսի.

4 Տե՛ս նաեւ **Ստեփանոս Օրբելյան,** Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԷ:

եւ վարդապետելն եւ սաղմոսելն վասն իմ անխափան եղիցի. եւ եթէ ոք ծուլացի ի քառասնեակ աւուրս ամ յամէ կատարել զմեղսաքաւիչ սուրբ խորհուրդն յետ ելից իմոց ի կենցաղոյս, ի Քրիստոսէ որոշեալ եղիցի, եւ մասն ընդ Սիմոնի կախարդի ընկալցի, եւ ի սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի: Շինեցի եւ զեկեղեցին ի գիւղաքաղաքին Կոթայ. եւ ի նմա Ը. սենեակ. եւ արարի պարիս ի փան Տեառն, զոր շինեցաք. եւ զԱստուածածնին քահանայքն ազատ արարաք յամենայն արքունի չարէ. ընդ նոսին եւ զայլ պաշտանեայս եկեղեցւոյ որք ի քահանայական կարգէ»:

«Ահա հենց սա էր,- շարունակում է Օրբելյանը,- Մաքենոցաց վանքի արձանագրությունը: Սակայն հնացած քարերը խախտված լինելու պատճառով չկարողացանք ամբողջն իմանալ. իշխանների գործերի եւ նվիրատվությունների մասին շատ բան է պակասում: Շատ թե քիչ սա դրեցինք, որ նրանց հիշատակը բոլորովին չջնջվի ու չկորչի»:

Մաքենյաց եկեղեցին նորոգվել է 1661 թվականին, ըստ տաճարի հարավային պատի արձանագրության (այն իր խոսակցական լեզվով ու օտար ոճով ինչքա՜ն է տարբերվում վերեւում բերվածից).

«*Կամաւն Աստուծոյ, որ Սիւնեաց Սոփան իշխան շինեաց Մաքենուց եկեղեցիս ի ԳԾ թվին, եւ առաջնորդ սուրբ ուխտիս Ջուղայեցի Խաչատուր վարդապետս, որդի զոլով Յակոբայ, վերստին նորոգեցի եւ պայծառացուցի ի ժամանակս արքազան հայրապետության Յակոբայ. եւ միաբանք սուրբ վանացս զՏէր Դարասամն, զՏէր Գրիգորն, եւ զաարկաւագունս զԳրիգորն, Ղազարն եւ Ստեփանոսն, տնտես Սարուխան յիշեցէք ի Քրիստոս Աստուած: Եւ որք յիշատակէ զմեզ՝ յիշատակ նոցա խաղաղութեամբ պահեսցի. ամէն. Հայր*»:

Տաճարի արեւմտյան ճակատին կա հետին դարերի մեկ ուրիշ արձանագրություն.

«*Շնորհաւքն Աստուծոյ եւ Մէլիք Մէլիքբէկեան որդի մեծ պարոն աստուած(աւէր) Ապաին եւ շինող տանս Գեղամա վերստին նորոգեցաք եկեղեցիս յիշատակ իմ եւ իմոցն, ամէն. Յիշեցէք Նիազ վերակացու*»:

Սա նախորդ՝ Խաչատուրի կատարած նորոգությունից ավելի քան մեկ դար առաջ է գրվել, քանի որ Գեղամա իշխան Աբովի որդի Մելիք Բեկը մահացել է 1578 թվականին, ինչպես արդեն ցույց ենք տվել:

Տաճարի առջեւ կա ուշ կառուցված՝ 20 կանգուն երկարության եւ 8 կանգուն լայնության ժամատուն: Սուփանի դասպակերտի արեւելյան կողմում կա քարաշեն փոքր մեկ ուրիշ եկեղեցի[5] (ունի 16 կանգուն երկարություն եւ 8՝ լայնություն): Այն շատ սենյակների, ընդարձակ սեղանատան, գոմերի եւ փարախի եւ այլ շինությունների հետ մեկտեղ գտնվում է վանքի բարձր պարսպի ներսում, որի դուռը հարավ-արեւմտյան անկյան վրա է: Կա նաեւ քարե հատակով մեծ խողովակ կամ ջրի ճանապարհ: Վանքի պարսպից դուրս կան նաեւ քարաշեն երկու ուրիշ եկեղեցիներ, մեկը նոր հիշվածի չափն ունի, մյուսն ավելի փոքր է (14 կանգուն երկարություն, 6՝ լայնություն): Սրանցից մեկնումեկը թերեւս Աստվածածնի տաճարից ավելի հին կարող է լինել:

Տեսակ-տեսակ ավերածություններից հետո Մաքենոցաց վանքը հույժ պայծառացավ

---

5 Ղ. Ալիշանը նշում է, որ այդ փոքր եկեղեցին Շահխաթունյանի հիշատակած կիսակործան մատուռանման շինությունն է:

Ը-ԺԲ. դարերի միջեւ, եւ բարի կարգերով հռչակվեց մանավանդ Գրիգոր Սուփանի կողմից փաճարը կառուցելուց հետո: Նրա ժառանգորդ իշխանները նպաստեցին տեղի շքեղացմանն ու բարգավաճմանը, մինչեւ անգամ Գեղամա երկիրը վերածեցին վանքի մի թեմի կամ վիճակի, ինչը Սյունյաց միապետական աթոռի համար զրկողություն պետք է համարել: Այդ պատճառով է պատմիչն ասում՝ «Մաքենոցացիները հափշտակել են Գեղաքունին»: Բայց ԺԱ. դարի սկզբին՝ 1006 թվականին, երբ Սարգիս Ա Սեւանցի կաթողիկոսը Սյունիքի եպիսկոպոս դարձրեց Հովհաննեսին, անմիջապես նրան վերադարձրեց Մաքենյաց վանքն ու այլ վիճակները: Սակայն մեկ դար հետո Մաքենավանքը դարձյալ Գեղամա երկրի սեփականությունը դարձավ, ինչի մասին վկայում է վերեւում հիշված՝ վանքի 1661 թվականի վերանորոգողը:

Դրանից տասը տարի անց, 1670 թվականին Մաքենավանքը նորոգող արքեպիսկոպոս եւ ասպվածաբան Խաչատուր Ռաբունապետը կոչվում է Գեղամա երկրի առաջնորդ: Իսկ նրանից մի քանի տարի առաջ, 1657 թ. հիշվում է վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետը, սակայն նրանց թե՛ հաջորդների, թե՛ նախորդների անունները հայտնի չեն: Ոսկանը եւս Մաքենոցը եպիսկոպոսական թեմ է կարգում, նույնն է հետո անում նաեւ Սիմեոն Կաթողիկոսը, որ վանքի տեսչության ներքո թվարկում է 50 գյուղ, ինչպես նաեւ Կոթի եւ Վարդենյաց անապատները, Սալկուտը եւ Աղան, որ Արեգունի թերակղզում է:

Վանքի սրբազան սպասքից հիշատակելի է Մաքենոցաց սուրբ Նշանը. այն ԺԱ. դարի վերջում պահվում էր Ուռհայում, Թորոս Կյուրոպաղատի մոտ, որն իր համար վերցրեց որպես երաշխավոր ուխտ, անձնատուր լինելու համար ընդառաջ գնաց Ֆոանկ իշխանին, սակայն դավաճանվեց այդ նենգահտ մարդու կողմից:

Մաքենյաց մենաստանում նյութական սպասքից Էլ ավելի պատվավոր կերպով էին պահպանվում Հայոց եկեղեցու առաջին հայրերի սահմանած կարգերն ու ավանդները: Այնքան, որ բազմերախտ Հայրապետ Ներսես Շնորհալին եկեղեցու կարգերը նորոգելիս հենց այստեղից՝ «սուրբ եւ հռչակավոր Մաքենյաց մեծ վանքի ասպվածաբնակ եւ հրեշտակակրոն սուրբ հայրերից խնդրեց ու բերել տվեց կանոնակարգը, եւ ողջ կամքով հավանելով՝ թերին լրացրեց, սխալն ուղղեց, եւ կարգեց Հայաստանյայց եկեղեցու անջնջելի եւ հաստատուն օրենքը Սուրբ Հոգու առաջնորդությամբ, որ ամեն ինչին դեպի բարին է ուղղորդում»:

Մաքենյաց մենաստանը տարբեր դարերում հիշողները երբեք չեն շրջանցում գովասական մակդիրները, որոնք ոչ միայն վանքի առաքինի կարգերն ու կարգապահությունը, այլեւ դրանց երկար հարատեւելն են հավաստում: Այդ պատճառով է, որ վանքի ներկայիս ամայությունն ու լքվածությունն առավել ողբալի են դառնում, որը թողնվել է անարժան այլազգիներին՝ պարսիկներին ու թաթարներին ի վայելումն: Սրանք միայն բարեհաճում են կիրակի օրերին վառել փաճարի գերեզմաններից մեկի վրայի ճրագը (եթե դա էլ դեռեւս պահպանվում է), որն էլ հայտնի չէ, թե որ առաջնորդինը կամ նշանավոր հանգուցյալինն է[6]: Ցանկալի է, որ սուփանաշեն գմբեթը բախտի քմահաճույքին չթողնվի եւ ամրացվի, քանի դեռ չի կործանվել, իսկ վանքում, գոնե նրա մի մասում, ասպիճանաբար վերականգնվի իր առաջվա ճոխությունը, որպես մեր նախնիների արժանավորագույն նշխարներից մեկը: Վերջին տարիներին, ասում են, դա արդեն ձեռնարկել է մի վարդապետ, որն իր կարողության չափով նորոգում կամ մաքրում է եկեղեցին»:

6 Ս. Ջալալյանը դա համարում է Հովհաննես Ե Դրասխանակերտցու գերեզմանը, սակայն վերջինիս օրոք այս փաճարը դեռեւս կառուցված չէր: